



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

Թիւ 1818  
Սայիս 15, 1857

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Ա. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Բորանթօ.

Ազնիւ սիրելիք մեր,

Ստացած ենք 1957 Սայիս 10 թուակիր Զեր ծխական տեղեկագիրը, որով կը հաղորդեիր թէ Հոգեշնորհ Տ. Աւագէն Արեղայ Թաղոյեանի նախագահութեան տակ գումարուած Մխական ժողովին մէջ ընտրած էթ Մխական Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը. կը խնդրեիր ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ներքո յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իրեւ Եկեղեցւոյ յդ նախանձախնդիրը, պարտաճանաչ եւ անձնուելու անդամները, կը վայելեն ընտրող ներու Վատահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւալին.

Տիարք՝ Սեղրակ Առուրեան  
Գրիգոր Ելմասեան  
Տիգրան Ունճեան  
Զաւէն Մեսրոպեան

Կ՞օրէնենք Մխական Խորհուրդի նորընտիր անդամները եւ Վատահ ենք որ Զեր Միացեալ Հանգերով պիտի գործէք ծուխիդ Հոգեւոր օգուին եւ Հայց. Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Սաղթելով Եկեղեցաշէն Զեր գործոց յաշողութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԱՄԲՐԵ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց